ՄՈԴՈՒԼ 1

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Ուսումնական նյութ լրագրողների, ՀԿ ներկայացուցիչների և իրավաբանների համար

«Ընտրական բարեվարքության և տեղեկատվական դիմակայունության ամրապնդում Հայաստանի մարզերում» ծրագիր

Սույն փաստաթուղթը պատրաստվել է «Ընտրական բարեվարքության և տեղեկատվական դիմակայունության ամրապնդում Հայաստանի մարզերում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից «Նոր ժողովրդավարություն» հիմնադրամի (NDF) ֆինանսական աջակցությամբ:

Բովանդակության համար պատասխանատու է Իրավաբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի «Նոր ժողովրդավարություն» հիմնադրամի տեսակետը:

Փաստաթուղթը պատրաստել է «Ընտրական բարեվարքության և տեղեկատվական դիմակայունության ամրապնդում Հայաստանի մարզերում» ծրագրի ազգային փորձագետ Մարիամ Զաղոյանը:

Փաստաթղթից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

© ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ, 2026

Բովանդակություն

1. Ի՞նչ է ընտրությունը. ինչու՞ ենք քվեարկում
    - 1.1. Ընտրությունը՝ որպես ամենահիմնական որոշում
    - 1.2. Ի՞նչ որոշումներ են կայացնում ընտրությունների միջոցով
    - 1.3. Ընտրությունների իմաստաբանական արժեքը
    - 1.4. Ի՞նչ նշանակություն ունի յուրաքանչյուր ձայնը
    - 1.5. Ո՞վ ինչ է ընտրում 2026 թվականի հունիսին
2. Ընտրությունների էկոհամակարգը. ո՞վ ով է
    - 2.1. Ընտրությունները կազմակերպող պետական մարմինները
    - 2.2. Ընտրությունների մասնակիցները
    - 2.3. Ընտրությունների վերահսկման մասնակիցները
    - 2.4. Ընտրությունների ինֆորմացիոն դերակատարները
    - 2.5. Ընտրությունների վերահսկողության դատական մարմինները
3. Ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքները
    - 3.1. Ընդհանուր ընտրական իրավունք
    - 3.2. Հավասար ընտրական իրավունք
    - 3.3. Ազատ ընտրական իրավունք
    - 3.4. Ուղղակի ընտրական իրավունք
    - 3.5. Քվեարկության գաղտնիություն
4. Ընտրողների ցուցակները և հարակից իրավունքները
    - 4.1. Ցուցակում ընդգրկվածությունը ստուգելու իրավունք
    - 4.2. Անճշտությունները վերացնելու դիմում
    - 4.3. Քվեարկության օրը կազմվող լրացուցիչ ցուցակ
    - 4.4. Ընտրողների տվյալների գաղտնիության պաշտպանություն
5. Քվեարկության օրը՝ ընտրողի իրավունքները քայլ առ քայլ
    - 5.1. Անձը հաստատող փաստաթղթեր
    - 5.2. Քվեարկության ընթացակարգը
    - 5.3. Քվեաթերթիկը սխալ լրացնելու դեպքում
    - 5.4. Իրավունք՝ ոչ ինքնուրույն քվեարկելու հնարավորություն չունեցողների համար
    - 5.5. Մատչելիության իրավունք
    - 5.6. Շրջիկ արկղով քվեարկություն
6. Ընտրողի կամքի ազատ արտահայտման պաշտպանություն
    - 6.1. Ընտրակաշառքի և սպառնալիքի արգելք
    - 6.2. Ազատ քվեարկության խոչընդոտման արգելք
7. Ընտրողի բողոքարկման իրավունքը
    - 7.1. Ի՞նչ կարող է բողոքարկել ընտրողը
    - 7.2. Ո՞ւմ է ուղղվում բողոքը
    - 7.3. Ե՞րբ պետք է ներկայացնել բողոքը
    - 7.4. Ինչպե՞ս պետք է կազմել բողոքը
    - 7.5. Ի՞նչ տեղի է ունենում բողոքի ներկայացումից հետո
8. Ընտրողի իրազեկման իրավունքը
9. ՏԻՄ ընտրությունների և հանրաքվեի առանձնահատկությունները

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

Հապավում	Բացատրություն
ԱԺ	Ազգային ժողով
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԸՏԸՀ	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԿԸՀ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՍԴ	Սահմանադրական դատարան
ՍԷԿՏ	Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ
ՏԸՀ	Տեղամասային ընտրական հանձնաժողով
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն մոդուլը նպատակ ունի ամփոփել Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Ընտրական օրենսգրքով[1] ընտրողին վերապահված հիմնական իրավունքները, դրանց իրականացման ընթացակարգերը և պաշտպանության մեխանիզմները։

Մոդուլի հիմնական ուշադրությունը կենտրոնացված է 2026 թվականի հունիսին նախատեսված Ազգային ժողովի (ԱԺ) հերթական ընտրությունների վրա, սակայն հակիրճորեն անդրադարձ է կատարվում նաև տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ընտրությունների և հանրաքվեների առանձնահատկություններին։

1. Ի՞նչ է ընտրությունը. ինչու՞ ենք քվեարկում

1.1. Ընտրությունը՝ որպես ամենահիմնական որոշում

Ընտրությունը այն մեխանիզմն է, որով ժողովուրդն իր իշխանությունը՝ որոշումներ կայացնելու և օրենքներ ընդունելու լիազորությունները, որոշակի ժամկետով փոխանցում է ընտրված ներկայացուցիչներին։ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ հոդվածը հստակ սահմանում է. «Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին։ Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով»։

Այսինքն՝ ընտրությունը ոչ թե զուտ ընթացակարգ է կամ քաղաքացիական պարտականություն, այլ իշխանության փոխանցման հիմնական մեխանիզմը։ Առանց ընտրությունների իշխանությունը կամ ինքնահռչակվում է, կամ ժառանգվում, կամ զավթվում։ Ընտրությունների միջոցով ժողովուրդը պարբերաբար, օրինական ճանապարհով որոշում է, թե ով է իրեն ներկայացնելու և ինչ ուղղությամբ է ընթանալու երկիրը։

1.2. Ի՞նչ որոշումներ են կայացնում ընտրությունների միջոցով

Հայաստանում տարբեր մակարդակի ընտրությունների միջոցով քաղաքացիները որոշում են.

---

[1] ՀՀ Ընտրական օրենսգրիրք սահմանադրական օրենք ՀՕ-54-Ն, ընդունված 25.05.2016, 07.04.2026 թ. դրությամբ ինկորպորացված տարբերակ

- Ազգային ժողովի ընտրությունների միջոցով՝ ինչ ուժեր կընդունեն երկրի օրենքները, ինչ կազմ կունենա կառավարությունը (քանի որ Ազգային ժողովի մեծամասնությունը ձևավորում է կառավարությունը), ով կլինի վարչապետը, ինչ ուղղությամբ կընթանա արտաքին քաղաքականությունը, ինչպես կբաշխվի պետական բյուջեն։
- Համայնքի ղեկավարների և ավագանիների ընտրությունների միջոցով՝ ով կղեկավարի համայնքը, ինչպես կօգտագործվեն տեղական բյուջեի միջոցները, ինչ զարգացման ուղղություններ կընտրվեն (ճանապարհաշինություն, դպրոցներ, մշակութային հաստատություններ և այլն)։
- Հանրաքվեի միջոցով՝ սահմանադրական կամ առանձին օրինագծի վերաբերյալ ուղիղ որոշումներ։

1.3. Ընտրությունների իմաստաբանական արժեքը՝ ինչու՞ է կարևոր մասնակցելը

Ընտրություններն ունեն մի քանի կարևոր գործառույթներ, որոնք հաճախ նկատելի չեն, քանի դեռ չեն կորել.

- Հաշվետվողականություն։ Քանի որ ընտրությունները պարբերական են (ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը 5 տարի է), ընտրված ներկայացուցիչները գիտեն, որ իրենց որոշումների համար պետք է հաշվետու լինեն հաջորդ ընտրությունների

ժամանակ։ Սա հզոր ստիմուլ է իշխանության համար՝ ապահովելու քաղաքացիների շահերը, ոչ միայն իրենց սեփական շահերը։

- Իշխանության խաղաղ փոխանցում։ Ընտրությունների շնորհիվ իշխանությունը մեկ ուժից մյուսին փոխանցվում է առանց բռնության։ Տարբեր երկրների փորձը ցույց է տալիս, որ իշխանության խաղաղ փոխանցումը՝ ընտրությունների միջոցով, ժողովրդավարության ամենահիմնական ցուցիչներից մեկն է։

- Տարբեր կարծիքների ներկայացվածությունը։ Ընտրությունների միջոցով ոչ միայն մեծամասնությունը, այլև փոքրամասնությունները ստանում են ձայնի և ներկայացվածության հնարավորություն։ Ընտրական օրենսգիրքն ուղղակիորեն ապահովում է ընդդիմության պաշտպանության մեխանիզմը (հոդված 95, մաս 4)՝ խորհրդարանում երաշխավորելով առնվազն 3 քաղաքական ուժի ներկայացվածությունը։

- Քաղաքացիների միջև փոխանակումը։ Ընտրությունները ստիպում են քաղաքական ուժերին դուրս գալ քաղաքացիների մոտ, լսել նրանց խնդիրները, պատասխանել հարցերի։ Քարոզարշավի շրջանում քաղաքացիներն ստանում են բացառիկ հնարավորություն՝ ուղղակիորեն հարցնել իշխանության հավակնող ուժերին իրենց մտահոգող հարցերը։

1.4. Ի՞նչ նշանակություն ունի յուրաքանչյուր ձայնը

Հաճախ ընտրողները, հատկապես մարզերում, կարծում են, որ իրենց անհատական ձայնը «ոչինչ չի որոշում»։ Սա մաթեմատիկորեն ճշմարիտ չէ։

Ընտրությունների արդյունքները ձևավորվում են հենց յուրաքանչյուր ձայնի կուտակումով։ Հայաստանի ընտրական պատմության մեջ եղել են դեպքեր, երբ կուսակցությունները 4% շեմը հաղթահարել կամ չհաղթահարել են շատ նեղ տարբերությամբ, և մի քանի հազար ձայնը որոշիչ է եղել ողջ խորհրդարանի կազմում։ Մեկ ընտրողի համար նրա ձայնը կարող է նվազ նշանակալից թվալ, բայց հազարավորների որոշումը լրացուցիչ՝ քվեարկել կամ չքվեարկել, հենց ձևավորում է վերջնական արդյունքը։

Բացի այդ, ձայնի «ոչինչ չորոշելու» զգացողությունը հաճախ նպատակային մշակվում է — որպեսզի ընտրողները հուսահատվեն և չմասնակցեն։ Քանի որ ընտրությունների մասնակցության ցածր մակարդակը ոչ թե չեզոք է, այլ խաթարում է բուն ժողովրդավարության որակը։

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՒՂԵՐՁ. Ընտրությունները ոչ միայն իրավունք են, այլև ուղիղ ազդեցության գործիք։ Քվեարկելուց բացի՝ քաղաքացու դերը ընտրական գործընթացում ավելի լայն է. դիտորդական առաքելության մաս կազմել, լրագրողին տեղեկացնել խախտումների մասին, փաստագրել անկանոնությունները, որոնք հետագայում կարող են օգտագործվել կուսակցությունների, դատարանների կողմից։ Իրազեկ ընտրողը ոչ թե միայն քվեարկում է, այլ նաև պաշտպանում է իր ձայնի ուժը։

1.5. Ո՞վ ինչ է ընտրում 2026 թվականի հունիսին

2026 թվականի հունիսին նախատեսված են ԱԺ հերթական ընտրությունները։ Քաղաքացիները կընտրեն 101 պատգամավորի (նվազագույն կազմը), որոնք 5 տարի շարունակ՝ մինչև հաջորդ հերթական ընտրությունները, ընդունելու են պետական օրենքները, հաստատելու են պետական բյուջեն, վավերացնելու են միջազգային պայմանագրերը, և, որ ամենակարևորն է, այս 101 պատգամավորների մեծամասնությունն է ձևավորելու Հայաստանի կառավարությունը և ընտրելու վարչապետին ։

ԸՆՏՐՈՂԻ ՀԱՅԱՑՔԻՑ. Մինչ քվեարկության օրը, ընտրողն իր ձայնը պետք է ուղղորդի՝ սովորելով կուսակցությունների ծրագրերը (հասանելի են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում՝ www.elections.am), համեմատելով դրանք իր արժեքների, կարիքների և սպասելիքների հետ, և քվեարկելով այն ուժի օգտին, որի կողմից կառավարությունը կներկայացնի իր տեսլականը երկրի զարգացման համար։ Քվեարկության որոշումը կարող է հիմնված լինել քաղաքական ծրագրերի, թեկնածուների որակների, անցյալ կատարված գործերի, և անձնական արժեքների վրա, բայց ոչ՝ հարկադրանքի, ընտրակաշառքի կամ ապատեղեկատվության արդյունք։

2. Ընտրությունների էկոհամակարգը. ո՞վ ով է

Ընտրությունները միայն քվեարկության օրվա իրադարձություն չեն. դրանք բարդ էկոհամակարգ են, որտեղ տասնյակ դերակատարներ ունեն հատուկ իրավունքներ, պարտականություններ և սահմանափակումներ։ Իրազեկ ընտրողն այն է, ով կարող է ճանաչել տարբեր դերակատարներին և իմանա, թե յուրաքանչյուրից ինչ սպասել։ Ստորև ներկայացված է էկոհամակարգի համառոտ քարտեզը։

2.1. Ընտրությունները կազմակերպող պետական մարմինները

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) անկախ պետական մարմին է, որը կազմակերպում է ԱԺ-ի և ՏԻՄ-երի ընտրությունները, հանրաքվեները և իրականացնում է վերահսկողություն դրանց օրինականության նկատմամբ (հոդված 51)։ ԿԸՀ-ն գործում է մշտապես, ունի պաշտոնական կայք՝ www.elections.am։ Հանձնաժողովի որոշումները պարտադիր են ողջ հանրապետության տարածքում։

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները (ԸՏԸՀ) մշտապես գործող պետական մարմիններ են, որոնք վերահսկողություն են իրականացնում սպասարկվող տարածքում, ընդունում են բողոքները տեղամասային հանձնաժողովների որոշումների վերաբերյալ։ ՏԻՄ-երի ընտրությունների արդյունքներն ամփոփում են հենց ԸՏԸՀ-ները։

- Տեղամասային ընտրական հանձնաժողովները (ՏԸՀ) ձևավորվում են ընտրությունների շրջանում և գործում մինչև արդյունքների ամփոփումը։ Հենց ՏԸՀ-ն է կազմակերպում քվեարկությունը, գրանցում ընտրողներին, հաշվում ձայները։

- Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը ընտրական հանձնաժողովներից անկախ մարմին է, որը վերահսկում է կուսակցությունների ու թեկնածուների

նախընտրական հիմնադրամները՝ ֆինանսական թափանցիկության ապահովման համար (հոդված 29)։

- Լիազոր մարմինը (Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն) վարում է ընտրողների ռեգիստրը, կազմում է ընտրողների ցուցակները, տալիս է վավերականության տեղեկանքներ։

2.2. Ընտրությունների մասնակիցները



- Ընտրողը ընտրական իրավունք ունեցող քաղաքացին է կամ, ՏԻՄ ընտրությունների դեպքում, նաև համապատասխան համայնքում մեկ տարուց ավելի հաշվառված քաղաքացիություն չունեցող անձը։
- Թեկնածուները Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ առաջադրվում են բացառապես կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքների միջոցով՝ ընտրական ցուցակներով (հոդված 81)։ Մեծամասնական ընտրակարգով անցկացվող ՏԻՄ ընտրություններում թեկնածուները կարող են ինքնառաջադրվել։
- Կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները մրցակցում են ընտրական ցուցակներով։ Դաշինքները կազմվում են առնվազն երկու կուսակցության կողմից, որոնք իրավունք չունեն ինքնուրույն մասնակցել ընտրություններին։

Լիազոր ներկայացուցիչները կուսակցության կամ թեկնածուի անունից հանդես եկող իրավունք ունեցող անձինք են, ովքեր կարող են ներկայացնել դիմումներ, բողոքներ և մասնակցել ընթացակարգերին (հոդված 35)։

2.3. Ընտրությունների վերահսկման մասնակիցները

Դիտորդները ներկայացնում են այնպիսի հասարակական կազմակերպություններ (ՀԿ)-ներ կամ հիմնադրամներ, որոնք օրենքով սահմանված կարգով հավատարմագրվել են ԿԸՀ-ում։ Հայաստանյան դիտորդական կազմակերպությունների կանոնադրական նպատակները պետք է առնվազն մեկ տարի ներառեն ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցերը (հոդված 30)։ Դիտորդները չեն կարող սատարել կամ քարոզել որևէ կուսակցության օգտին։

Միջազգային դիտորդները ներկայացնում են միջազգային կազմակերպություններ կամ օտարերկրյա ՀԿ-ներ՝ հրավերի առկայության դեպքում։

Վստահված անձինք գործում են կուսակցության կամ թեկնածուի շահերի պաշտպանության համար ընտրական հանձնաժողովներում, պետական մարմիններում և լրատվամիջոցների հետ փոխհարաբերություններում (հոդված 33)։ Ի տարբերություն դիտորդների, վստահված անձինք բացահայտորեն կողմ են որոշակի կուսակցության կամ թեկնածուի։

Զանգվածային լրատվության միջոցների (ԶԼՄ) ներկայացուցիչները հավատարմագրվում են ԿԸՀ-ում, ունեն հատուկ իրավունքներ ընտրական հանձնաժողովների նիստերին և քվեարկության սենյակում ներկա լինելու համար։

Մարդու իրավունքների պաշտպանը (ՄԻՊ). ՄԻՊ-ը ընտրությունների ոչ մշտադիտարկող, ոչ վերահսկող մարմին է, սակայն ընտրական իրավունքների պաշտպանության մշտական դերակատար։ Սահմանադրության հոդված 83.1-ի համաձայն՝ ՄԻՊ-ը անկախ պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից խախտված մարդու իրավունքների պաշտպանությունը։ Ընտրության ժամանակ ՄԻՊ-ը սովորաբար ստեղծում է հատուկ աշխատանքային խումբ, որն ապահովում է քաղաքացիների բողոքների քննարկումն ու իրավական

խորհրդատվությունը։ ՄԻՊ-ի դերը հատկապես կարևոր է, երբ խախտումն ունի համակարգային բնույթ կամ պետական մարմնի անգործության հետևանք է։

2.4. Ընտրությունների ինֆորմացիոն դերակատարները

Ընտրությունների ինֆորմացիոն դաշտը հենց այնքան կարևոր է, որքան քվեարկության տեխնիկական կազմակերպումը։ Այստեղ առանձնանում են մի քանի դերակատարներ.

- Բարեխիղճ լրագրողները և լրատվամիջոցները իրականացնում են ընտրությունների լուսաբանումը՝ պահպանելով օրենքով սահմանված եթերաժամի հավասարության սկզբունքները, թափանցիկ նշելով սոցիոլոգիական հարցումների մեթոդաբանությունը։
- Փաստերի ստուգման (fact-check) նախաձեռնությունները մասնագիտացված ՀԿ-ներ կամ լրատվական նախաձեռնություններ են, որոնք ստուգում են քարոզարշավի ընթացքում տարածվող փաստերի ու հայտարարությունների հավաստիությունը։
- Ապատեղեկատվություն տարածողները այն դերակատարներն են, որոնք գիտակցաբար տարածում են կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ՝ ընտրողների կարծիքին ազդելու համար։

2.5. Ընտրությունների վերահսկողության դատական մարմինները

- Վարչական դատարանը քննարկում է ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների և անգործության դեմ դիմումները։
- Սահմանադրական դատարանը քննարկում է ԿԸՀ-ի կողմից ԱԺ ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների վերաբերյալ դիմումները (հոդված 102)՝ սովորաբար ընտրություններին մասնակցող կուսակցությունների դիմումով։
- Իրավապահ մարմինները՝ ոստիկանությունը, դատախազությունը, քննչական կոմիտեն, ազգային անվտանգության ծառայությունը, քրեորեն հետապնդելի խախտումների դեպքերում (ընտրակաշառք, այլ անձի փոխարեն քվեարկություն, քվեաթերթիկների կեղծում և այլն) իրականացնում են քննություն և քրեական հետապնդում։



3. Ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքները

Ընտրական իրավունքի սկզբունքները ամրագրված են և՛ ՀՀ Սահմանադրությամբ (հոդված 4), և՛ Ընտրական օրենսգրքով (հոդված 1)։ Ընտրությունները Հայաստանի Հանրապետությունում անցկացվում են հինգ հիմնարար սկզբունքներով՝ ընդհանուր, հավասար, ազատ, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ Այս սկզբունքները կազմում են ընտրողի իրավունքների միջուկը։

3.1. Ընդհանուր ընտրական իրավունք (հոդված 2)

Սահմանադրության հոդված 30-ը սահմանում է. «Հայաստանի Հանրապետության՝ տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանն ու տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք»: Ըստ այդմ, ընտրելու իրավունք ունեն բոլոր այն ՀՀ քաղաքացիները, որոնք քվեարկության օրը լրացած են 18 տարեկան: Ազգային ժողովի ընտրությունների դեպքում քաղաքացիության պահանջը բավարար է. այլ լրացուցիչ պայման չի առաջադրվում:

ՏԻՄ ընտրությունների ժամանակ սահմանված են լրացուցիչ պայմաններ՝ կապված համայնքի բնակչության ռեգիստրում հաշվառման հետ.

- ՀՀ քաղաքացիները՝ քվեարկության օրվանից առնվազն 6 ամիս հաշվառում տվյալ համայնքում.
- Հաշվառման 6-ամսյա պահանջը չի կիրառվում, եթե անձը նոր է զորացրվել պարտադիր ժամկետային ծառայությունից կամ ազատվել ազատազրկման ձևով պատիժը կրելուց.
- ՀՀ քաղաքացիություն չունեցող անձինք՝ տվյալ համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառմամբ:

ԿԱՐԵՎՈՐ.

Ընտրելու իրավունք չունեն միայն դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվածները, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված ու պատիժը կրող անձինք (հոդված 2, մաս 4)։ Ընտրական իրավունքի այլ սահմանափակում օրենսգրքով նախատեսված չէ։

3.2. Հավասար ընտրական իրավունք (հոդված 3)

Բոլոր ընտրողները ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով։ Հանրային իշխանությունները պարտավոր են ապահովել հավասար պայմաններ՝ անկախ ընտրողի ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից։ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ յուրաքանչյուր ընտրող ունի մեկ ձայն (հոդված 79)։

3.3. Ազատ ընտրական իրավունք (հոդված 4)

Ոչ ոք իրավունք չունի պարտադրելու ընտրողին քվեարկել որևէ թեկնածուի կամ կուսակցության օգտին կամ դեմ, ինչպես նաև հարկադրելու նրան մասնակցել կամ չմասնակցել ընտրություններին։ Ոչ ոք չի կարող հարկադրանքի որևէ եղանակով ընտրողից բացահայտել, թե ինչպես է վերջինս մտադիր քվեարկելու կամ ինչպես է քվեարկել։

3.4. Ուղղակի ընտրական իրավունք (հոդված 5)

Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, բացառությամբ համայնքների ավագանիների կողմից ընտրվող համայնքների ղեկավարների, անցկացվում են անմիջականորեն ընտրողների կողմից։

3.5. Քվեարկության գաղտնիություն (հոդված 6)

Քվեարկության գաղտնիությունը ընտրողի համար ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն։ Ընտրողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողությունն արգելվում է։ Քվեարկության խցիկում այլ անձի ներկայությունն արգելվում է, բացառությամբ քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողի կողմից հրավիրված այլ քաղաքացու (հոդված 67, մաս 9)։

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելը՝ մինչև 5 տարի ազատազրկում (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 215)։

4. Ընտրողների ցուցակները և հարակից իրավունքները

Ընտրողների ռեգիստրը մշտապես վարվող փաստաթուղթ է, որը կազմվում է ըստ մարզերի և համայնքների (հոդված 9)։ Ռեգիստրը վարում և ընտրողների ցուցակները կազմում է լիազոր մարմինը (Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն)։ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) պաշտոնական կայքն է՝ www.elections.am (հոդված 8.1)։



4.1. Ցուցակում ընդգրկվածությունը ստուգելու իրավունք (հոդված 13)

Յուրաքանչյուր ընտրող իրավունք ունի՝

- Տեղամասային կենտրոնում փակցված ցուցակում տեսնելու սեփական տվյալները.
- ԿԸՀ կայքում որոնման հնարավորությամբ ստուգելու, թե որ տեղամասում է ընդգրկված.
- Ստանալու տեղեկություն, թե ումից, որքան ժամանակում և ինչպես կարելի է վերացնել ցուցակային անճշտությունները։

4.2. Անճշտությունները վերացնելու դիմում (հոդված 14)

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի լիազոր մարմին ներկայացնել դիմում ընտրողների ռեգիստրում տեղ գտած անճշտությունների (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացման մասին։ Դիմումը պետք է պարունակի անհրաժեշտ հիմնավորումներ, և դրան կից՝ փաստական հանգամանքների ապացույցներ։ Լիազոր մարմինը դիմումը քննում է 30 օրվա ընթացքում, իսկ ընտրությունների շրջանում՝ կրճատ ժամկետներով։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ.

Ընտրությունից առնվազն 1-2 ամիս առաջ քաղաքացիներին պետք է խրախուսել ստուգել իրենց հաշվառման հասցեն և տեղամասային համապատասխանությունը՝ խուսափելու համար քվեարկության օրը անակնկալ խնդիրներից։

4.3. Քվեարկության օրը կազմվող լրացուցիչ ցուցակ (հոդված 15)

Եթե ընտրողը քվեարկության օրն է հայտնաբերում, որ չի ընդգրկված ցուցակում, սակայն ունի լիազոր մարմնի տեղեկանք կամ դատական ակտ, ապա տեղամասային հանձնաժողովը նրան ընդգրկում է լրացուցիչ ցուցակում և թույլատրում քվեարկել։ Ընտրական հանձնաժողովներն իրավունք չունեն սեփական նախաձեռնությամբ ինչ-որ բան փոխել կամ լրացնել ցուցակներում (հոդված 14, մաս 4)։

4.4. Ընտրողների տվյալների գաղտնիության պաշտպանություն

Ընտրողի անձնական տվյալները՝ ստորագրությունները, մատնահետքերը և քվեարկության կտրոնները, պաշտպանված են, և դրանցից քաղվածք կատարելը արգելվում է բոլորին (դիտորդներին, վստահված անձանց, լրագրողներին և այլոց), բացառությամբ վերահաշվարկի ընթացքում, և ապա միայն տվյալ նպատակով (հոդված 34, մաս 1, կետ 3)։

5. Քվեարկության օրը՝ ընտրողի իրավունքները քայլ առ քայլ

Քվեարկությունն անցկացվում է ժամը 8.00-ից մինչև 20.00-ը (հոդված 65, մաս 1)։ Քվեարկության նախորդ և քվեարկության օրը նախընտրական քարոզչություն, ինչպես նաև լրատվամիջոցներով սոցիոլոգիական հարցումների հրապարակում մինչև ժամը 20.00-ը արգելվում են (հոդվածներ 19, 22)։

5.1. Անձը հաստատող փաստաթղթեր (հոդված 66, մաս 1)

Քվեարկության համար ընդունվում են հետևյալ փաստաթղթերը.

- Նույնականացման քարտը (ID քարտ).
- Կենսաչափական անձնագիրը.
- Ոչ կենսաչափական անձնագիրը.
- Անձնագրին կամ նույնականացման քարտին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթը՝ տրված լիազոր մարմնի կողմից.
- Քրեակատարողական հիմնարկում գտնվող ընտրողի համար՝ համապատասխան փաստաթուղթը.
- Զորամասում քվեարկող զինծառայողների համար՝ զինվորական վկայականը կամ զինվորական գրքույկը։

ԿԱՐԵՎՈՐ.

Անձը հաստատող փաստաթղթի վավերականության ժամկետի ավարտը հիմք չէ ընտրողին քվեարկության չթողնելու համար, բացառությամբ այն դեպքի, երբ

տեխնիկական սարքավորման մեջ առկա է տվյալ անձին վերաբերող այլ՝ վավերականության ժամկետը չլրացած փաստաթուղթ (հոդված 66, մաս 2)։

5.2. Քվեարկության ընթացակարգը (հոդվածներ 66-67)

Քայլ 1. Ընտրողը ներկայանում է մասնագետին և ներկայացնում անձը հաստատող փաստաթուղթը։ Մասնագետը այն ներմուծում է տեխնիկական սարքավորման մեջ։

Քայլ 2. Տեխնիկական սարքավորման էկրանին հայտնվում է հետևյալ նշաններից մեկը.

՝ ընտրողը գրանցված է ցուցակում և չի մասնակցել քվեարկությանը (նորմալ ընթացք).

՝ ընտրողը գրանցված չէ տվյալ տեղամասում, ուղղորդվում է ճիշտ տեղամաս.

՝ ընտրողն արդեն մասնակցել է քվեարկությանը՝ դա կարող է վկայել «այլ անձի փոխարեն քվեարկության» փորձի մասին, և տեղամասային հանձնաժողովը պարտավոր է հրավիրել ոստիկանություն (հոդված 66, մաս 6)։

ՔԱՅԼ 3. Կանաչ նշանի դեպքում ընտրողը ներմուծում է իր մատնահետքը (առաջնահերթությամբ՝ աջ ձեռքի ցուցամատը), իսկ դրա անհնարինության դեպքում քայլը բաց է թողնվում։ Ստանում է քվեարկության կտրոն։

ՔԱՅԼ 4. Ընտրողը հաջորդ հանձնաժողովի անդամից վերցնում է քվեաթերթիկ(ներ)ը և քվեարկության ծրարը, անցնում քվեարկության խցիկ։ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրողին տրվում են բոլոր կուսակցությունների մեկական քվեաթերթիկները, և նա չի կարող հրաժարվել դրանք ստանալուց (հոդված 67, մաս 2)։

ՔԱՅԼ 5. Խցիկում ընտրողն ընտրում է որևէ մեկ կուսակցության քվեաթերթիկը և առանց ծալելու դնում քվեարկության ծրարի մեջ։ Չօգտագործված քվեաթերթիկները գցում է խցիկում տեղադրված առանձին տուփի մեջ։

ՔԱՅԼ 6. Ընտրողը մոտենում է քվեատուփին, հանձնաժողովի անդամին վերադարձնում է քվեարկության կտրոնը, որից հետո անդամը ծրարին փակցնում է ինքնասոսնձվող դրոշմանիշ և թույլատրում գցել քվեատուփը։

5.3. Քվեաթերթիկը սխալ լրացնելու դեպքում (հոդված 67, մաս 10)

Եթե ընտրողը կարծում է, որ քվեաթերթիկը սխալ է լրացրել կամ վնասել, իրավունք ունի դիմել հանձնաժողովի նախագահին և պահանջել նոր քվեաթերթիկ։ Սխալ լրացված քվեաթերթիկը անհապաղ մարվում է։

5.4. Իրավունք՝ ոչ ինքնուրույն քվեարկելու հնարավորություն չունեցողների համար (հոդված 67, մաս 9)

Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողը (օրինակ՝ տեսողության խնդիր ունեցող, գրագիտություն չունեցող կամ այլ պատճառով) իրավունք ունի, հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո, քվեարկության խցիկ հրավիրել այլ անձի, որը չպետք է լինի՝

- Ընտրական հանձնաժողովի անդամ.
- Վստահված անձ.
- Դիտորդ.
- Լրատվամիջոցի ներկայացուցիչ.
- Այցելու։

Օգնող անձը կարող է օգնել միայն մեկ ընտրողի։ Տվյալները գրանցվում են հանձնաժողովի մատյանում։

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը պատժվում է 2–5 տարի ազատազրկմամբ, խումբ անձանց կողմից՝ 3–6 տարի (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 214)։

5.5. Մատչելիության իրավունք (հոդված 17, մաս 5; հոդված 65, մաս 8)

Տեղամասային կենտրոնը պետք է ընտրվի այնպես, որ ապահովվի հաշմանդամություն ունեցող, տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող և տեսողության խնդիր ունեցող անձանց անխոչընդոտ մուտքն ու ելքը։ ԿԸՀ-ն պարտավոր է սահմանել լրացուցիչ հնարավորություններ քվեարկության մատչելիության համար՝ ապահովելով քվեարկության գաղտնիությունը։

5.6. Շրջիկ արկղով քվեարկություն

Շրջիկ արկղով քվեարկության հնարավորություն նախատեսված է ձերբակալվածների, ստացիոնար բուժման մեջ գտնվող անձանց համար

(հոդվածներ 63-64)։ Կարևոր է, որ ընտրողները տեղյակ լինեն այս հնարավորության մասին, քանի որ սովորական ընտրողը չի կարող պահանջել այս տարբերակը։

6. Ընտրողի կամքի ազատ արտահայտման պաշտպանություն

Ընտրակաշառքի և սպառնալիքի արգելք (հոդված 19, մաս 6)

Նախընտրական քարոզչության ընթացքում, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուներին և ընտրություններին մասնակցող կուսակցություններին արգելվում է անձամբ կամ իրենց անունից որևէ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ կամ խոստանալ՝

- Դրամ.
- Սննդամթերք.
- Արժեթղթեր.
- Ապրանքներ.
- Մատուցել կամ խոստանալ ծառայություններ։

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ.

- Ընտրակաշառք ստանալը կամ պահանջելը հանցագործություն է՝ մինչև 3 տարի ազատազրկում, խումբ անձանց կողմից՝ 3–7 տարի (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 218)
- Ընտրակաշառք տալը կամ խոստանալը՝ 3–6 տարի, խումբ անձանց դեպքում՝ 4–8 տարի (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 218)
- Ընտրակաշառքի միջնորդությունը՝ մինչև 3 տարի, իշխանական լիազորությունների օգտագործմամբ՝ 2–5 տարի (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 220)
- Բարեգործության դիմակով ընտրողներին գույք կամ ծառայություններ տալը՝ 3–6 տարի (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 221)։

Բարեգործական կազմակերպությունները, որոնց անվանումները ասոցացվում են ընտրություններին մասնակցող կուսակցությունների կամ թեկնածուների հետ, քարոզչության ժամանակ չեն կարող բարեգործություն իրականացնել այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրությունները (հոդված 19, մաս 6.1)։

Հանրային պաշտոնյաները չեն կարող իրենց ծառայողական դիրքից օգտվել քարոզչության նպատակով։ Արգելքի մանրամասն ցանկի մասին տե՛ս Մոդուլ 2։ Քվեարկության օրվա ընթացքում գործում են մի շարք սահմանափակումներ, որոնց մասին տեղեկատվությունը տե՛ս Մոդուլ 2։

6.2. Ազատ քվեարկության խոչընդոտման արգելք

Ընտրողի ազատ կամքի արտահայտումը պաշտպանված է ոչ միայն ընտրակաշառքի, այլև ուղղակի հարկադրանքի ցանկացած ձևի դեմ։ Արգելվում է ընտրողի վրա ճնշում գործադրելը՝ լինի դա բռնության սպառնալիք, ծառայողական կախվածության օգտագործում, թե նյութական հարկադրանք։ Սա վերաբերում է ինչպես մասնավոր անձանց, այնպես էլ պաշտոնատար անձանց կողմից կատարված գործողություններին։

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ. Ընտրական իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտելը հանցագործություն է, որը պատժվում է մինչև 2 տարի, բռնության սպառնալիքով կամ խումբ անձանց կողմից՝ 3–6 տարի, իսկ որոշակի ձևով քվեարկելուն հարկադրելը բռնության սպառնալիքով կամ նյութական կախվածությամբ՝ 4–8 տարի (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 210)։

7. Ընտրողի բողոքարկման իրավունքը

Ընտրությունների ընթացքում խախտում նկատելու դեպքում ընտրողը կարող է ներկայացնել գրավոր բողոք։ Բողոքարկման իրավունքը ընտրողի պաշտպանության ամենահիմնական գործիքն է. առանց դրա ընտրողի մյուս բոլոր իրավունքները ենթակա կլինեն խախտման՝ առանց հետևանքների։ Այս բաժինը պատասխանում է չորս հիմնական հարցին՝ Ի՞ՆՉ, Ո՞ՒՄ, Ե՞ՐԲ և ԻՆՉՊԵ՞Ս է բողոքարկվում։

7.1. Ի՞նչ կարող է բողոքարկել ընտրողը (հոդված 48, մաս 3)

Ընտրողը կարող է բողոքարկել ընտրական հանձնաժողովի ցանկացած որոշում, գործողություն կամ անգործություն, որով խախտվում է կամ կարող է խախտվել իր ընտրական իրավունքը։ Տիպական դեպքերն են.

- Ընտրողների ցուցակում չընդգրկվելը կամ սխալ տվյալներով ընդգրկվելը.
- Քվեարկության թույլտվության անհիմն մերժումը.
- Քվեարկության գաղտնիության խախտումը տեղամասում.

- Տեղամասային հանձնաժողովի՝ ընթացակարգի խախտումները (օրինակ՝ քվեատուփի կնքման սխալ, ընտրողի հետ վարման խնդիր).
- Ոստիկանության կողմից չարձագանքելը խախտման դեպքում, երբ հանձնաժողովը հրավիրում էր.
- Տեղամասային կենտրոնում քարոզչական նյութերի առկայությունը։

Ընտրական հանձնաժողովի ցանկացած որոշում, գործողություն կամ անգործություն (հոդված 48, մաս 3) բողոքարկելու իրավունք ունեն հետևյալ անձինք.

- Յուրաքանչյուր ոք, ով գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ Ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը (կետ 1).
- Վստահված անձը՝ եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդի իրավունքը (կետ 2).
- Դիտորդը կամ այցելուն՝ եթե խախտվել է իր Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը (կետ 3).
- ԶԼՄ ներկայացուցիչը՝ եթե խախտվել է իր Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը (կետ 4).
- Ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը՝ եթե խախտվել է իր, վստահորդ կուսակցության կամ ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի իրավունքը (կետ 5)։

Միևնույն ժամանակ, անհատական բողոքներից բացի, օրենսգրքով սահմանված են ընտրությունների ընդհանուր արդյունքների վիճարկման որոշակի հատուկ տեսակի դիմումներ, որոնք ընտրողին հասանելի չեն, այլ՝ հասանելի են միայն կուսակցություններին և թեկնածուներին: Դրանք են՝

- Թեկնածուի կամ ընտրական ցուցակի գրանցումն անվավեր ճանաչելու դիմում.
- Տեղամասում քվեարկության արդյունքն անվավեր ճանաչելու դիմում.
- Ընտրությունների ընդհանուր արդյունքն անվավեր ճանաչելու դիմում.
- ԱԺ ընտրությունների արդյունքների բողոքարկում Սահմանադրական դատարան.
- Քվեարկության արդյունքների վերահաշվարկի պահանջ։

Այս դիմումների ընթացակարգային մանրամասները, ժամկետները և իրավական հիմքերը ներկայացված են Մոդուլ 2-ում։

Ի տարբերություն մյուս հատուկ դիմումների, «այլ անձի փոխարեն քվեարկելու դիմում»-ը (հոդված 48, մասեր 16–18) ուղղակիորեն հասանելի է նաև ընտրողին՝ այն դեպքում, երբ ընտրողը չի մասնակցել քվեարկությանը, բայց ընտրողների ցուցակում առկա է իր ստորագրությունը (նշանակում է՝ ինչ-որ մեկը նրա փոխարեն գրանցվել ու քվեարկել է)։ Դիմումի կազմման մանրամասները, քրեական պատասխանատվության նախազգուշացման ձևերը, ՍԷԿՏ համակարգով ստուգման մեխանիզմը՝ տես Մոդուլ 2։

ԿԱՐԵՎՈՐ.

Եթե ընտրողը նկատում է իր ստորագրությունը այնպիսի ցուցակում, որտեղ ինքը չի քվեարկել, սա հանցագործության փաստ է. ոչ միայն ընտրողն իրավունք ունի դիմել, այլև պարտավոր է անհապաղ տեղեկացնել իրավապահ մարմիններին։

ԱՂՅՈՒՍԱԿ 1 . ՈՎ ԻՆՉ ԿԱՐՈՂ Է ԲՈՂՈՔԱՐԿԵԼ (հոդված 48)

✓ = իրավասու է, ✗ = իրավասու չէ

Դիմումի տեսակ	Ընտրող (յուրաք. ոք)	Վստահված անձ	Դիտորդ / այցելու	ԶԼՄ ներկ.	Կուսակց. լիազոր ներկ.	Թեկնածու	ՏՀՀ անդամ
Ընթացակարգային խախտում՝ ցանկացած հանձնաժողովի որոշման և գործողության դեմ դեմ (Հոդված 48, մաս 3)	✓f	✓[2]	✓[2]	✓[2]	✓[2]	✓f	✓f
Թեկնածուի/ ընտրական ցուցակի գրանցման անվավեր ճանաչում (Հոդված 48, մաս 9–11)	✗	✗	✗	✗	✓ (ԱԺ)	✓ (ՏԻՄ)	✗
Տեղամասի քվեարկության արդյունքի անվավեր ճանաչում (Հոդված 48, մաս 12)	✗	✓[3]	✗	✗	✓	✓	✓
Այլ անձի փոխարեն քվեարկելու դիմում (Հոդված 48, մաս 16)	✓[4]	✓	✗	✗	✓	✓ (ՏԻՄ)	✓
Քվեարկության արդյունքների վերահաշվարկ	✗	✓	✗	✗	✓	✓	✓[5]

Դիմումի տեսակ	Ընտրող (յուրաք. ոք)	Վստահված անձ	Դիտորդ / այցելու	ԶԼՄ ներկ.	Կուսակց. լիազոր ներկ.	Թեկնածու	ՏԸՀ անդամ
(Հոդված 50)							
Ընտրության ընդհանուր արդյունքի անվավեր ճանաչում արդյունքն ամփոփող հանձնաժողովում՝ մինչև որոշման ընդունումը (Հոդված 48, մաս 13)	✗	✗	✗	✗	✓	✓ (ՏԻՄ)	✗
ԱԺ ընտրության ԿԸՀ որոշման բողոք ՍԴ՝ որոշման ընդունումից հետո (հոդված 102) [2]	✗	✗	✗	✗	✓[6]	✗	✗

ԿԱՐԵՎՈՐ.
Ընտրողի «✗» նշանով դիմումները նա չի կարող ուղղակիորեն ներկայացնել. դրանք հասանելի են միայն կուսակցություններին, թեկնածուներին, վստահված անձանց և այլ սահմանված սուբյեկտներին։ Սակայն ընտրողը կարող է իր նկատած խախտումը գրավոր փաստագրել և փոխանցել այդ սուբյեկտներին, որոնք իրավասու են համապատասխան դիմում ներկայացնել։ Ընտրական բարեվարքության պաշտպանության շղթան հաճախ սկսվում է հենց ընտրողի փաստաթղթից։

7.2. Ո՞ւմ է ուղղվում բողոքը

Բողոքարկման իրավունքն արմատավորված է ՀՀ Սահմանադրության հոդված 18-ում («Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական ...

---

[2] f Միայն եթե խախտվել է իր սուբյեկտիվ ընտրական իրավունքը (հոդված 48, մաս 3, կետ 1՝ «յուրաքանչյուր ոք»)։
[2] Միայն եթե խախտվել է իր կամ իր վստահորդի/կազմակերպության օրենսգրքով սահմանված իրավունքը։
[3] Միայն եթե քվեարկության օրը ներկա է եղել քվեարկության սենյակում կամ արդյունքների ամփոփման նիստին։
[4] Միայն այն ընտրողը, ով չի մասնակցել քվեարկությանը, բայց ցուցակում առկա է իր ստորագրությունը։
[5] Միայն այն ՏԸՀ անդամը, ով գրանցամատյանում կատարել է հատուկ կարծիքի մասին գրառում։
[6] Միայն ընտրություններին մասնակցած կուսակցությունները/դաշինքները՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմ. օրենքով սահմանված կարգով։ Ժամկետ՝ որոշման հրապարակման օրվանից 5-րդ օրը՝ մինչև 18:00։

պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք») և հոդված 27.1-ում («Յուրաքանչյուր ոք ունի ... պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին դիմումներ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»)

Բողոքարկման սկզբունքը պարզ է. յուրաքանչյուր մարմին բողոքարկվում է իր վերադաս մարմնում: Ընտրողը կարող է ընտրել երկու ուղուց մեկը.

- Վարչական ուղի՝ վերադաս ընտրական հանձնաժողովում.
- Դատական ուղի՝ վարչական դատարանում:

Կարևոր է, որ եթե նույն բողոքը ներկայացվել է երկու ուղիով միաժամանակ, վարչական վարույթը կարճվում է (հոդված 48, մաս 1): Ուստի պետք է ընտրել մեկ ուղի:

ԱՂՅՈՒՍԱԿ 2 ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ո՞ՒՄ ԴԵՄ ԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ	Ո՞ՒՐ Է ՈՒՂՂՎՈՒՄ	ԺԱՄԿԵՏ
ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՏԸՀ)	ԸՏԸՀ	2 օր այն պահից, երբ դիմողն իմացել է խախտման մասին
ԸՏԸՀ ՈՉ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄ / ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ / ԱՆԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ	ԿԸՀ կամ վարչական դատարան	3 օրացուցային օր (եթե 3-րդը ոչ աշխ. է՝ հաջորդ աշխ. օր ժ. 18:00)
ԿԸՀ ՈՉ ԱԺ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄ / ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ / ԱՆԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ	Վարչական դատարան	վարչական դատավարության օրենսգրքով
ԱՅԼ ԱՆՁԻ ՓՈԽԱՐԵՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ	ԸՏԸՀ	Քվեարկության հաջորդ օրը ժ. 12:00-ից սկսած. Մինչև քվեարկության օրվանից հետո 3-րդ օրը ժ. 11:00-ն:

Ընդունման ժամերը՝ տես ստորև 7.3-ում:

ԿԱՐԵՎՈՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ.

Ընտրությունների արդյունքների մասին որոշումները (թե՛ ԸՏԸՀ-ի, թե՛ ԿԸՀ-ի) կարող են վիճարկվել միայն կուսակցությունների և թեկնածուների կողմից: ԿԸՀ-ի ԱԺ

ընտրությունների արդյունքների մասին որոշումները բողոքարկվում են ՍԴ (հոդված 102), իսկ ԸՏԸՀ-ի և ԿԸՀ-ի մյուս արդյունքային որոշումները՝ վարչական դատարան։ Ընտրողը այս ուղիները ուղղակիորեն չունի։ Մանրամասները՝ Մոդուլ 2։

7.3. Ե՞րբ պետք է ներկայացնել բողոքը

Ընտրական ժամկետները կարճ են և խիստ պահպանելի. ուշացած բողոքները չեն քննարկվում։ Ստորև ներկայացված է, թե երբ կարող է ընտրողն իր բողոքը ներկայացնել։

Տեղամասային հանձնաժողովի դեմ (ուղղվում է ընտրատարածքային հանձնաժողովին).

- Ընդհանուր ժամկետ. 2 օր այն օրվանից, երբ ընտրողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին.
- Աշխատանքային օրեր. ժ. 9:00–18:00.
- Քվեարկության նախորդ օրը. ժ. 9:00–19:00.
- Քվեարկության օրը. ժ. 8:00–22:00.
- Քվեարկության հաջորդ օրը. ժ. 12:00–18:00.
- Քվեարկությունից 2 օր հետո. ժ. 9:00–11:00։

Ընտրատարածքային հանձնաժողովի դեմ (ուղղվում է ԿԸՀ-ին).

- Ընդհանուր ժամկետ. 3 օրացուցային օր այն օրվանից, երբ ընտրողն իմացել է խախտման մասին.
- Եթե 3-րդ օրը ոչ աշխատանքային է (բացառությամբ քվեարկության շուրջ հատուկ օրերի), ժամկետը երկարացվում է մինչև հաջորդ աշխատանքային օր ժ. 18:00-ն.
- Ընդունման ժամերն ըստ օրերի՝ նույնը, ինչ տեղամասային հանձնաժողովի դեմ բողոքների դեպքում։

7.4. Ինչպե՞ս պետք է կազմել բողոքը (հոդված 49)

Բողոքը պետք է լինի գրավոր, ներկայացված էլեկտրոնային կամ թղթային ձևով։ Դիմումը պարտադիր ներառում է հետևյալ տարրերը.

- Դիմողի տվյալները. անունը, ազգանունը, հաշվառման հասցեն, դիմումի տրման ամսաթիվը։ Կարող է ներառվել նաև հեռախոսահամարը կամ էլ. փոստի հասցեն (արագ կապի համար)։
- Պահանջը. Հստակ ձևակերպել՝ ինչ է ընտրողը ակնկալում (օրինակ՝ «անվավեր ճանաչել տեղամասային հանձնաժողովի այս որոշումը», «պարտադրել ընտրողների ցուցակում ուղղել իմ տվյալները»)։
- Հիմնավորումները. Ինչ խախտում է եղել, որտեղ, երբ, ով է ներգրավված եղել։ Որքան կոնկրետ, այնքան լավ։
- Ապացույցները. Կցել առկա ապացույցները՝ լուսանկարներ, տեսանյութեր, վկաների գրավոր ցուցմունքներ, փաստաթղթերի պատճեններ։
- Ստորագրությունը. Դիմողի կողմից։
- Կարգավիճակը հավաստող փաստաթղթի (վկայականի) պատճենը. կիրառելի է թեկնածուի, վստահված անձի, դիտորդի, ԶԼՄ ներկայացուցչի, հանձնաժողովի անդամի կամ լիազոր ներկայացուցչի կողմից ներկայացվող դիմումների պարագայում։

ԻՐԱՎԱԲԱՆԻ ՀԱՄԱՐ.

Անանուն, կեղծ տվյալներով, իրավունքի չարաշահմամբ, ոչ իրավասու անձի կողմից ներկայացված դիմումները չեն քննարկվում, և դրանցով վարչական վարույթներ չեն հարուցվում (հոդված 49, մաս 1)։ Ձևական մերժումից խուսափելու համար. ստուգե՛ք հաճախորդի հետ՝ ճի՛շտ սուբյեկտ (ընտրողի իրավունքը խախտվա՞ծ է), ճի՛շտ հասցեատեր (ո՛ր հանձնաժողովն է մեղավորը), ճի՛շտ ժամկետ (քանի՞ օր է անցել), ճի՛շտ ապացույց (նյութական, ոչ թե լոկ ենթադրությունների)։

7.5. Ի՞նչ տեղի է ունենում բողոքի ներկայացումից հետո

Հանձնաժողովը պարտավոր է ընդունել և գրանցել ընտրողի դիմումը։ Որոշումը կայացվում է հետևյալ ժամկետներում (հոդված 48, մաս 7).

- Մինչև քվեարկության նախորդ օրը ստացված դիմումներ. 5 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան քվեարկության սկիզբը.
- Քվեարկության օրվանից սկսած ստացված դիմումներ. մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը (ԱԺ ընտրությունների ժամանակ ընտրատարածքային հանձնաժողովի համար՝ ամփոփման ժամկետից 1 օր առաջ)։

Եթե հանձնաժողովը մերժում է բողոքը կամ չի արձագանքում, ընտրողը կարող է վերադաս հանձնաժողովին (ընթացակարգային ուղի) կամ վարչական դատարան (դատական ուղի) ներկայացնել նոր բողոք՝ սույն բաժնի 7.2-7.3 կանոնների շրջանակում։

Լրացուցիչ պաշտպանության գործիք՝ ՄԻՊ-ին դիմելը. Պաշտոնական բողոքարկման ուղիներից բացի, ընտրողը կարող է զուգահեռաբար դիմել Մարդու իրավունքների պաշտպանին, հատկապես երբ՝ տեղամասային հանձնաժողովը կամ ոստիկանությունն անհիմն չի արձագանքել խախտմանը, կամ երբ խախտումն ունի համակարգային բնույթ և վերաբերում է մեծ թվով քաղաքացիների։ ՄԻՊ-ի դիմումը չի փոխարինում ընտրական օրենսգրքով սահմանված ուղիները, բայց կարող է ապահովել խախտման հանրային փաստագրումն ու արագ արձագանքումը։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ.
Նույնիսկ եթե ընտրողի դիմումը մերժվում է, բողոքի ֆայլը մնում է որպես խախտման փաստագրում։ Այս փաստաթղթերը հետագայում կարող են օգտագործվել կուսակցությունների կամ դիտորդական կազմակերպությունների կողմից ընտրությունների ընդհանուր արդյունքների վիճարկման ընթացքում։ Ուստի՝ ներկայացնել բողոքը նույնիսկ այն դեպքերում, երբ թվում է, թե կանոնափոխման հնարավորությունը ցածր է. դա ընտրողի ձայնը պաշտպանելու երկար շղթայի առաջին օղակն է։

8. Ընտրողի իրազեկման իրավունքը

Ընտրությունները նախապատրաստվում և անցկացվում են հրապարակայնորեն (հոդված 8)։ ԿԸՀ կայքում՝ www.elections.am, պարտավոր են հրապարակվել՝

- Հանձնաժողովի որոշումները.
- Նիստերի ժամանակացույցը, օրակարգը, ուղիղ հեռարձակումը, տեսաձայնագրությունները.
- Ընտրողների ռեգիստրը (որոնման հնարավորությամբ).
- Կուսակցությունների նախընտրական ծրագրերը.
- Թեկնածուների գույքի և եկամուտների հայտարարագրերը.
- Տեսաձայնագրված նյութերը (պահպանվում են քվեարկությունից հետո 5 տարի).
- Նախընտրական հիմնադրամների հայտարարագրերը (3-օրյա ժամկետում ստանալուց հետո՝ հոդված 28, մաս 4)։

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՀԱՄԱՐ.

ԿԸՀ կայքը՝ www.elections.am, ընտրողի «թիվ մեկ գործիքն» է: Այնտեղ կարելի է ստուգել իր տեղամասը, թեկնածուների հայտարարագրերը, տեսնել իրական ժամանակում նիստերի ընթացքը, և քվեարկության օրը հետևել քվեարկության կենդանի հեռարձակմանը (հոդված 8, մասեր 8-12):

9. ՏԻՄ ընտրությունների և հանրաքվեի առանձնահատկությունները

9.1. ՏԻՄ ընտրությունները

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն ոչ միայն ՀՀ քաղաքացիները, այլև ՀՀ քաղաքացիություն չունեցող անձինք՝ տվյալ համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառմամբ (հոդված 2, մաս 2): Սա Ազգային ժողովի ընտրությունների համեմատությամբ ընտրելու իրավունքի շրջանակը ընդլայնող կարևոր դրույթ է:



ՏԻՄ ընտրությունները կարող են անցկացվել՝

- Մեծամասնական ընտրակարգով՝ համայնքի ղեկավարի և ավագանու անդամների (բաժին 5).
- Համամասնական ընտրակարգով՝ Երևանի, Գյումրու, Վանաձորի և օրենքով սահմանված այլ համայնքների ավագանիների (բաժին 6):

Համամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու ընտրությունների ժամանակ նրա ղեկավարը ընտրվում է ավագանու անդամների կողմից, ոչ թե ուղղակիորեն ընտրողների կողմից (հոդված 5, մաս 1)։

9.2. Հանրաքվեի մասին

ԿԸՀ-ն սույն օրենսգրքով սահմանված կարգով նաև գրանցում է հանրաքվեներ անցկացնելու նախաձեռնող խմբերին, սահմանում ստորագրությունների հավաքման և վավերականության հաստատման կարգը, քարոզչության կողմերին դահլիճներ և եթերաժամ տրամադրելու կանոնները (հոդված 51, մասեր 24.1-24.7)։ Հանրաքվեի մանրամասները կարգավորվում են առանձին օրենքով՝ «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով։

Վերջաբան

Ընտրողի իրավունքները ընտրական ողջ ինֆրակառուցվածքի կենտրոնական տարրն են։ Իրազեկ ընտրողը՝ նա, ով գիտի իր իրավունքները, դրանց պաշտպանության գործիքները և բողոքարկման ընթացակարգերը, ընտրական բարեվարքության կարևորագույն երաշխիքներից մեկն է։ Մարզերում իրազեկման սեսիաների առաջնահերթ նպատակն է քաղաքացիներին զինել գործնական գիտելիքներով, որոնք թույլ կտան ոչ միայն ինքնաբավ կերպով քվեարկել, այլ նաև մասնակցել ընտրական գործընթացի որակի վերահսկողությանը։